ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

т. XXII, № 7, 1969

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

Վ. Ի. ՎԱՐԴԱՆՈՎԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

(Մահվան 50-ամյակի առթիվ)

Վարդան Իվանովիչ Վարդանովը XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայազգի նշանավոր գիտնականներից մեկն է։ Նա եղել է Ի. Ռ. Թարխանովի և Ի. Պ. Պավլովի աշակերտներից Պետերբուրգի ռազմա-բժշկական ակադեմիայում։ Ինչպես Ի. Ռ. Թարխանովը, այնպես էլ Ի. Պ. Պավլովը շատ բարձր են գնահատել Վ. Ի. Վարդանովի հետ համատեղ աշխատանքը։ Ի. Ռ. Թարխանովը Վ. Ի. Վարդանովի մասին 1892 թվականին ասել է. «Տասը տարուց ավելի է, ինչ մենք միասին ենք գործում մատաղ սերնդին գիտություն ուսուցանելու համար։ Դուք ինձ համար ամենաթանկագին օգնականն եք»։

Ի. Պ. Պավլովը Վ. Ի. Վարդանովին 1911 թվականին գրել է «Առանձնապես միշտ ջերմորեն հիշում եմ մեր ընդհանուր ակադեմիական աշխատանքը»։

Ի՞նչն է, որ առիթ է տվել այսպիսի բարձր գնահատականների։ Վ. Ի. Վարդանովը 1871 թվականին ընդունվել է Պետերբուրգի բժշկա-վիրաբուժական ակադեմիան։ Արդեն երկրորդ կուրսից նա տարվում է ֆիզիոլոգիայով։ Նրա դասընկեր Բ. Աղասարյանը այդ մասին վկայում է «...շուտով նա սկսեց ոգևորվել բնախոսությամբ շնորհիվ այն ժամանակվա հայտնի բնախոս Ի. Թարխանովի, որը, անտարակույս, մեծ ազդեցություն ունեցավ Վարդան Իվանովիչի վրա, որովհետև պրոֆեսորը մեծ հռչակ ուներ իբրև լավ ճարտարախոս լեկտոր, լսարանը ոգևորող։ Ահա արդեն երկրորդ կուրսից էլ Վարդան Իվանովիչը ոգևորությամբ տարվել էր ֆիզիոլոգիայով»։

1876 թվականին Վարդանովը ավարտում է բժշկա-վիրաբուժական ակադեմիան և փորձեր կատարում Ի. Թարխանովի լաբորատորիայում։ Վրա է հասնում 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը և երիտասարդ զինվորական բժիշկ Վ. Ի. Վարդանովը իր նման շատերի հետ միասին մեկնում է գործող բանակ։ Պատերազմը վերջանալուց հետո նա վերադառնում է իր սիրելի լաբորատորիան, որպեսզի շարունակի ֆիզիոլոգիայի ասպարեզում իր կիսատ թողած հետազոտությունները։

1882 թվականին Վ. Ի. Վարդանովը բնախույզների ընկերության նիստում հանդես է գալիս Ն. Ցիբուլսկու հետ համատեղ կատարած գիտական աշխատանքով՝ «Դեպրեսոր և թափառող ներվերի միջև եղած փոխհարաբերությունների մասին», որը 1883 թվականին տպագրվել է Ս. Պ. Բոտկինի «Կլինիկական շաբաթաթերթ»-ում («Еженедельная клиническая газета»)։ *Այդ ուղղությամբ շարունակելով իրենց աշխատանքները, Վ. Ի. Վարդանովը և Ն. Ցիբուլսկին ողնիների վրա կատարում են թափառող ներվերի գրգռման յուրահատուկ էֆեկտների ուսումնասիրություն։ Այս աշխատանքը հրատարակվել է 1886 թվականին Կրակովի գիտությունների ակադեմիայի արձանագրություններում, ինչպես նաև ռուս բժիշկների 3-րդ համագումարի օրագրում, 1889 թվականին։*

Նույն շրջանում Ի. Ռ. Թարխանովի լաբորատորիայում Վարդանովը ուսումնասիրում է օրգանիզմի ջերմականոնավորման հարցերը։ Վարդանովի վերոհիշյալ աշխատանքի արդյունքները Ի. Ռ. Թարխանովը բերել է Ֆոստերի ֆիզիոլոգիայի դասագրքի թարգմանության մեջ։

Այդ շրջանում Վարդանովի ուշադրությունն են գրավում նաև պրակտիկ-բժշկագիտական հարցերը։ Ախտահանող նյութերի հայտնագործումից հետո բժշկության մեջ մեծ հետաքրքրություն էր առաջացել պրոֆիլակտիկ միջոցառումների կիրառման հանդեպ։ Վարդանովը հետաքրքրվում է այն հարցով, թե օդի էլեկտրականացումը ինչպիսի՞ միջոց է հիվանդաբեր գործոնների դեմ մղվող պայքարում։

1888 և 1889 թվականներին լույս են տեսնում Վարդանովի երկու աշխատությունները՝ «Էլեկտրականացման ճանապարհով օդի վարակազերծման մասին» և «Ստատիկ էլեկտրականության անտեսանելի լիցքերի ազդեցությունը ստորակարգ օրգանիզմների վրա» (տպագրվել են *ռուս բժիշկների 3-րդ համագումարի օրագրում, 1889 թ.*) *թեմաներով։*

Վարդանովի հետազոտության հիմքում ընկած էր պրակտիկայի հետ թեորիայի ունեցած կապի գաղափարն իրականացնելու ձգտումը։

Էլեկտրական երևույթների և բիոլոգիական աշխարհի փոխհարաբերություններին վերաբերող վերոհիշյալ երկու աշխատությունները նաև բացահայտում էին Վ. Ի. Վարդանովի գիտական հետաքրքրությունը բիոէլեկտրական երևույթների նկատմամբ, որոնք դարձան Վարդանովի դոկտորական դիսերտացիայի բուն նյութը։

1890-ական թվականներին Ի. Ռ. Թարխանովի լաբորատորիայում Վ. Ի. Վարդանովն սկսում է իր դոկտորական դիսերտացիայի աշխատանքները մաշկում առաջացող էլեկտրական երևույթների վրա։ Վարդանովի գիտական աշխատանքները արդեն 1892 թվականին հարստանում են նրա դոկտորական դիսերտացիայով՝ «Գալվանական երևույթներ գորտի մաշկում» թեմայով, որտեղ «շոշափվել են կենդանի հյուսվածքներում էլեկտրական երևույթների մի շարք սկզբունքային հարցեր։ Վարդանովի այս աշխատության մեջ հատկապես ուշադրություն է դրավում նրա դրույթն այն մասին, որ մաշկային էլեկտրական երևույթները ենթակա են ռեֆլեկտոր ազդեցությունների և որ շերեփուկի մաշկում զարգացման վաղ ստադիաներում չի հաջողվում ի հայտ բերել էլեկտրական հոսանքներ։ Վարդանովն իր աշխատության մեջ շեշտում էր համանմանությունը մաշկային էլեկտրական երևույթների և Սեչենովի կողմից ողնուղեղում հայտնաբերված էլեկտրական երևույթների միջև» (Ա. Ս. Կոշտոյանց)։

Այսպիսով, ռազմա-բժշկական ակադեմիայում աշխատելու շրջանում Վ. Ի. Վարդանովը իրեն դրսևորեց որպես աճող գիտնական և հիանալի մանկավարժ։

Այս հանգամանքներն է շեշտել Ի. Ռ. Թարխանովը Վարդանովին տված գնահատության մեջ, նրա դիսերտացիայի պաշտպանության ժամանակ։

Իր ժամանակին հայ պարբերական մամուլում հրատարակվել է Պետերբուրգից ուղարկված մի նամակ, նվիրված Վ. Ի. Վարդանովի դիսերտացիայի պաշտպանությանը։ Այս նամակում հեղինակը բերում է Վարդանովի դիսերտացիայի պաշտպանության ժամանակ Թարխանովի ելույթը։ Այդ հատվածը հետևյալն է. «Հայտնի պրոֆեսոր-ակադեմիկոս Թարխանովը այսպես ասաց. «Ձեր այսօրվա ներկայացրած աշխատությունը, երբ շուտով լույս կտեսնի և արտասահմանում, պիտի պատկառելի տեղ ստանա և այնտեղի բժշկական գրականության մեջ և շատ հայտնի պրոֆեսորների հայտնած մտքերը նույն խնդրի մասին, որը դուք այդքան հաջող պարզել եք, պիտի խոնարհվեն Ձեր աշխատության առաջ։ Դուք գիտության մարդ եք»։

Բացի այդ, Վ. Ի. Վարդանովից մեզ են հասել ֆիզիոլոգիայի երկու ձեռնարկներ՝ դրանցից մեկը, որը կրում է «Ֆիզիոլոգիայի դասընթաց» խորագիրը, հրատարակվել է 1906 թվականին Պետերբուրգում և ընդգրկում է ընդհանուր ֆիզիոլոգիայի մի շարք հարցեր, ինչպիսիք են՝ արյան, ներվա-մկանային ֆիզիոլոգիա, արյան շրջանառություն, մարսողություն, միզարտադրություն և ջերմարտադրում։ Մյուս ձեռնարկը հրատարակվել է 1915 թվականին և հիմնականում, վերաբերում է ներվա-մկանային ֆիզիոլոգիային։ Այդ երկու ձեռնարկներն էլ արտահայտում են ֆիզիոլոգիայի զարգացման իր ժամանակի մակարդակը։

Նշված ձեռնարկներն ստեղծվել են ինչպես Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտում, այնպես էլ դաստիարակների և դասատուների դասընթացներում Վ. Ի. Վարդանովի կարդացած դասախոսություններից։

Դրանցից մեկի խմբագիրն է եղել հետագայում շատ նշանավոր ֆիզիոլոգ Վ. Յու. Զագորսկեցը, մյուսը խմբագրել է ինքը՝ Վ. Ի. Վարդանովը։

Այսպիսով, Վ. Ի. Վարդանովի մեզ հասած գիտական և մանկավարժական ժառանգությունը բաղկացած է գիտական հոդվածներից, դոկտորական դիսերտացիայից և ֆիզիոլոգիայի ձեռնարկներից։

Նրա գիտական հոդվածները, թվով շուրջ տասը, հրատարակվել են, հիմնականում, անցյալ դարի 80-90-ական թվականներին՝ ինչպես ռուսական բժշկական հանդեսներում, այնպես էլ Պիրոգովյան բժշկական ընկերության օրագրերում և աշխատություններում։ Չնայած այդ հոդվածները հրատարակված են, բայց այսօր շատ դժվար է գտնել և օգտագործել դրանք։ Երևանում այդ աշխատությունները բոլորովին չկան, սահմանափակ օրինակներ կան Մոսկվայի և Լենինգրադի կենտրոնական գրադարաններում։

Ինչ վերաբերում է Վարդանովի դոկտորական դիսերտացիային, ապա այն, ինչպես և նախահեղափոխական Ռուսաստանում պաշտպանված բոլոր դոկտորական դիսերտացիաները, հրատարակվել է և այդ վիճակում միայն ներկայացվել պաշտպանության։ Բայց այն հրատարակվել է սահմանափակ տպաքանակով և այժմ հազվագյուտ գիրք է նույնիսկ մասնագիտական նեղ շրջանակների համար։

Ֆիզիոլոգիայի ձեռնարկներից մեկը (1906 թվականի հրատարակություն) շատ սահմանափակ քանակով կա Մոսկվայի և Լենինգրադի կենտրոնական գրադարաններում։

Ինչ վերաբերում է ֆիզիոլոգիայի մյուս ձեռնարկին (1915 թ.), ապա նույնիսկ այդ գրադարաններում այն չկա, թերևս ապակետիպ ձևով հրատարակված լինելու պատճառով։ Վերջինիս մի օրինակը կա Վ. Ի. Վարդանովի նշանավոր աշակերտուհի պրոֆ. Ա. Վ. Տոնկիխի մոտ։

Վ. Ի. Վարդանովի մեզ հասած գիտական ժառանգությունը շատ կողմերով չի կորցրել իր գիտական արժեքն ու նշանակությունը, իսկ մյուս կողմից՝ հազվագյուտ է նույնիսկ մասնագետների շրջանում։

1953 թվականին լրացավ Վ. Ի. Վարդանովի ծննդյան 100-ամյակը, իսկ այս տարի լրանում է նրա մահվան 50-ամյակը։

Վ. Ի. Վարդանովի հիշատակի հավերժացման առաջին քայլը կլինի այն, եթե ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան ձեռնարկի նրա ընտիր երկերի հրատարակությանը։

Ա. Ա. ԼԱԼԱՅԱՆ